

Իրենց վրայ դիզուած դիակներուն տակ,  
Ու սգաւոր մարդերուն աղօթքներն արցունքոտ,  
Որ կածանէ մը դէպի համայնափոսերը կ'երկարին.  
Մտիկ ըրէ՞ք հոգեվարքներուն ձայները վերջին,  
Հովին հարուածներուն մէջ որ ծառերը կը ջարդէ,

Օ՛, մի՛ մօտենաք, մի՛ մօտենաք, մի՛ մօտենաք,  
Զրլլայ որ մօտենաք գերեզմաննոցներուն եւ ծովուն,  
Կարմիր ջուրերուն վրայ նաւեր կը նշմարեմ հեռուն  
Մեռելներու կուտակումներ անոնց մէջ կան,  
Ու ցաւն գալարուող ալիքներուն վրայ,  
Գանկեր ու սրունքներ ինծի կ'երեսան...

Մտիկ ըրէ՞ք, մտիկ ըրէ՞ք, մտիկ ըրէ՞ք,  
Փոթորիկին գոչը ծովուն ալիքներուն մէջ,  
Կոտորած, կոտորած, կոտորած...  
Մտիկ ըրէ՞ք, մտիկ ըրէ՞ք, մտիկ ըրէ՞ք  
Մահաձայն ոռնումը զարհուրեալ շուններուն,  
Հովիտներէն ու գերեզմաններէն ինծի հասնող,  
Օ՛, պատուհանները փակեցէ՞ք ու աչքերնիդ ալ,  
Կոտորած, կոտորած, կոտորած...: